ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՐՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ № 343

18-ը նոյեմբերի 2021թ.
Ք. Նոր Հաճն

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Լիլիյա Հակոբյան ԱՁ-ն դիմել է իր գործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքի Պ. Սևակի 1/9/1 հասցեում գտնվող 50-ից մինչև 75 քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում, ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ստանալու խնդրանքով:
Հաշվի առնելով, որ ըստ №10883, 10884 անդորրագրերի դիմումատուն 2021 թվականի համար կատարել է Նոր Հաճն համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 20-ի № 47-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Տալ *Լիլիյա Հակոբյան ԱՁ-ին* (վկայականՈ№ 01ա100815) իր գործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքի Պ. Սևակի 1/9/1 հասցեում գտնվող 75 քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում, իրականացնելու ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2021 թվականի համար:
2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական, եկամուտների հարցերով առաջատար մասնագետ՝ Խ. Թարվերդյանի վրա:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՒՌՈՒՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22-ը նոյեմբերի 2021թ. N 344
Նոր Հաճն

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի ***որոշում եմ*** .

Ռոզա Խաչիկի Զաքարյանին սեփականության իրավունքով պատկանող, 0.06 հա ընդհանուր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը հասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝

- Նոր Հաճն համայնք, Պարգևաշեն 2-րդ թաղամաս, թիվ 38 հողամաս:

Համայնքի ղեկավար **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 բ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՍՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22-ը նոյեմբերի 2021թ. N 345

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐԳԵՎԱՇԵՆ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 38 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 04-ի N 1023-Ն որոշման, 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ կառուցած շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Ռոզա Խաչիկի Զաքարյանին սեփականության իրավունքով պատկանող Նոր Հաճն համայնքի Պարգևաշեն 2-րդ թաղամասի, թիվ 38 հասցեում գտնվող հողամասում ինքնակամ կառուցված 32.37 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը համարել օրինական:
2. Ռոզա Խաչիկի Զաքարյանը պարտավոր է ինքնակամ կառուցված 32.37 քառակուսի մետր արտաքին մակերեսով շինության օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից վաթսուն օրվա ընթացքում Նոր Հաճնի համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին մուծել 74969 (յոթանասունչորս հազար ինը հարյուր վաթսունինը) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ.Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22-ը նոյեմբերի 2021 թ. N 346
Նոր Հաճն

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ,48-րդ և 53-րդ կետերի պահանջներով՝ ***որոշում եմ.***

Ռուբեն, Սիրուն, Սեյրան, Սուսաննա, Արմինե և Հայկանուշ Կիրակոսյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող /վկայական՝ N 1320443/ բնակարանը վերահասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝

- Նոր Հաճն համայնք, Չարենցի փողոց, 25 շենք, թիվ 26 բնակարան:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 Նոյեմբեր 2021թվականի N 347

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԵՐԱՎՃԱՐՆԵՐԻ ԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N920-Ն որոշմամբ,հիմք ընդունելով մասնագիտական եզրակացությունը որոշում եմ.

1.Նոր Հաճն համայնքի 2021 թվականի բյուջեից վերադարձնել փոխադրամիջոցի մասով առաջացած գերավճարները՝ համաձայն հավելվածի(հավելվածը կցվում է):

2.Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս.Բադալյանին ապահովել վճարումը՝ համաձայն հավելվածի:

3.Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ, ֆինանսական,եկամուտների հարցերով Խ. Թարվերդյանին գույքահարկի բազայում կատարել համապատասխան փոփոխություններ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2021 թ. Նոյեմբեր 23
ք.Նոր Հաճն

Հավելված
Նոր Հաճն համայնքի ղեկավարի
2021թ.-ի նոյեմբերի 23-ի
N 347 որոշման

Ց Ա Ն Կ

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԵՐԱՎՃԱՐԻ ԵՏ ՎԵՐԱԴԱՐՁԻ

Հ/Հ	Անուն,Հայրանուն, Ազգանուն	Անձնագրային տվյալներ	Գույքահարկ	Բանկ և հ/հ	Վերադարձվող գումարի չափը՝դրամ
1	Հարությունյան Գնել Սուրենի	ՆՔ 011719507 տրված 11.08.2021թ 058-ից	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	Հայբիզնեսբանկ ՓԲԸ 1150036910414600	2254 /երկու հազար երկու հարյուր հիսունչորս /
2	Թովմասյան Արման Գուրգենի	Անձ. AR0467475 տրված 28.09.2017թ 058-ից	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	Արդշինբանկ ՓԲԸ 2470058184860000	1525 / հազար հինգ հարյուր քսանհինգ /

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 բ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՍՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26-ը նոյեմբերի 2021 թ. N 348

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ս. ՋՈՒԼՖՅԱՆ 2 ԹԱՂԱՄԱՍԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 12/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, 2019 թվականի նոյեմբերի 19-ի՝ 225-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, 2006 թվականի հունվարի 19-ի N 139-Ն որոշումների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 04-ի N 1023-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Նոր Հաճն համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2021 թվականի նոյեմբերի 23-ի N 23112021-07-0171 վկայական) Ս.Ջուլֆյան 2-րդ թաղամասի 2-րդ փողոցի թիվ 12/1 հասցեում գտնվող 5.3 քառակուսի մետր մակերեսով քարե պարիսպը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 0.057 հա մակերեսով, 07-006-0013-0207 կադաստրային ծածկագրի տակ գտնվող, բնակելի կառուցապատման նշանակության հողամասը գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Արմեն Բորիսի Հովհաննիսյանին:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26-ը նոյեմբերի 2021թ. N 349
Նոր Հաճն

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի ***որոշում եմ*** .

Սողոմոն Աղաբեկի Խառատյանին սեփականության իրավունքով պատկանող, 0.06 հա ընդհանուր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը հասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝

- Նոր Հաճն համայնք, Պ. Սևակի թաղամաս 5-րդ փողոց, թիվ 13 հասցե:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 բ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՍՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26-ը նոյեմբերի 2021 թ. N 350
Նոր Հաճն

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ Պ. ՍԵՎԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 13 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի 4-րդ մասի, 2019 թվականի նոյեմբերի 19-ի՝ 225-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 04-ի N 1023-Ն որոշման, 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշմամբ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ կառուցած շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Սողոմոն Աղաբեկի Խառատյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ սեփականության վկայագիր՝ 12/624) Պ. Սևակ թաղամասի 5-րդ փողոցի թիվ 13 հասցեում գտնվող, 07-006-0005-0005 կադաստրային ծածկագրով՝ 0.06 հա մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 14.48 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը ,14.0 քառակուսի մետր մակերեսով հարթակը և 3.4 քառակուսի մետր մակերեսով հենապատը՝ համարել օրինական:
2. Սողոմոն Աղաբեկի Խառատյանը պարտավոր է ինքնակամ կառուցված 31.88 քառակուսի մետր արտաքին մակերեսով շինությունների օրինականացման համար, սույն որոշման ընդունման օրվանից վաթսուն օրվա ընթացքում Նոր Հաճնի համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին մուծել 73834 (յոթանասուն երեք հազար ութ հարյուր երեսունչորս) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
3. <<ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ *ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՍԽԱԼՆԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ* >> 698-Ն որոշմամբ՝ հաստատել հատակագիծը՝ կադաստրային քարտեզում ուղղման համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակման հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար **Գագիկ Մաթևոսյան**